Կ Ո Ն Վ Ե Ն Ց Ի Ա

Հայաստանի Հանրապետության և Բելգիայի Թագավորության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին

Հայաստանի Հանրապետությունը և Բելգիայի Թագավորությունը, ղեկավարվելով երկու Պետությունների միջև տնտեսական, գիտական, տեխնիկական և մշակութային համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու մտադրությամբ, եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու, հարկումից խուսափելը կանխելու և հարկային խտրականությունը բացառելու նպատակով որոշեցին կնքել սույն Կոնվենցիան և պայմանավորվեցին հետևյալի մասին.

Գուխ 1

Կոնվենցիայի կիրառման ոլորտը

Հոդված 1

Այն անձինք, որոնց նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան

Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

Հոդված 2

Այն հարկերը,, որոնց վրա տարածվում է Կոնվենցիան

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող Պետության կամ նրա քաղաքական կամ վարչատարածքային ստորաբաժանումների կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանված եկամուտների և գույքի հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամուտների և գույքի հարկեր են համարվում ամբողջ եկամտի, ամբողջ գույքի կամ եկամտի կամ գույքի առանձին տարրերի նկատմամբ սահմանված բոլոր հարկերը՝ ներառյալ շարժական կամ անշարժ գույքի օտարումից առաջացած հավելաճի, ձեռնարկությունների վճարած աշխատավարձի կամ ռոճիկի ընդհանուր գումարի, ինչպես նաև գույքի արժեքաճի հարկերը:

3. Սույն Կոնվենցիան կիրառվում է, մասնավորապես, գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ.

ա) Հայաստանի դեպքում.

(i) շահութահարկ,

(ii) եկամտահարկ,

(iii) գույքահարկ,

(iv) հողի հարկ:

(այսուհետև հիշատակվող որպես «հայկական հարկ»).

բ) Բելգիայի դեպքում.

(i) ֆիզիկական անձանցից եկամտահարկ,

(ii) ձեռնարկություններից եկամտահարկ,

(iii) իրավաբանական անձանցից եկամտահարկ,

(iv) ոչ ռեզիդենտներից եկամտահարկ,

(v) լրացուցիչ ճգնաժամային վճարումներ,

ներառյալ կանխավճարներ, վերոհիշյալ հարկերի և կանխավճարների գերավճարներ և ֆիզիկական անձանց եկամտահարկի լրացումներ,

(այսուհետև հիշատակվող որպես «բելգիական հարկ»):

4. Սույն Կոնվենցիան կիրառվում է նաև սույն հոդվածի 1-ին կետի դրույթների համաձայն դասակարգված հարկերին ըստ էության համանման հարկերի նկատմամբ, որոնք կսահմանվեն սույն Կոնվենցիայի ստորագրումից հետո՝ ի լրումն առկա հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները ժամանակին ծանուցում են միմյանց իրենց հարկային օրենքներում կատարած որևէ նշանակալի փոփոխության մասին:

Գ լուխ 2

Սահմանումներ

Հոդված 3

Ընդհանուր սահմանումներ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով, եթե ենթատեքստը այլ բան չի պահանջում.

ա) «Պայմանավորվող Պետություն» և «մյուս Պայմանավորվող Պետություն» տերմինները, ենթատեքստից կախված, նշանակում են Հայաստան կամ Բելգիա,

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն և աշխարհագրական իմաստով օգտագործվելիս նշանակում է՝ տարածք՝ ներառյալ ներքին ջրերը, որի նկատմամբ

Հայաստանի Հանրապետությունը, իր ներքին օրենսդրությամբ և միջազգային իրավունքին համապատասխան, ինքնիշխան իրավունքներ և իրավասություն է իրականացնում,

գ) «Բելգիա» տերմինը նշանակում է Բելգիայի Թագավորություն և աշխարհագրական իմաստով օգտագործվելիս նշանակում է՝ տարածք, ներառյալ տարածքային ծովը և ցանկացած այլ տարածքներ ծովում և օդում, որի շրջանակներում Բելգիայի Թագավորությունը իրականացնում է իր ինքնիշխան իրավունքները և իրավասությունը՝ միջազգային իրավունքին համապատասխան,

դ) «Պայմանավորվող Պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են, համապատասխանաբար, Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

ե) «անձ» տերմինը ներառում է ֆիզիկական անձը, ընկերությունը և անձանց ցանկացած այլ միավորումը,

զ) «ընկերություն» տերմինը նշանակում է՝ ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավոր, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ,

է) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է՝ ծովային, գետային նավով, օդանավով, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցով իրականացվող ցանկացած փոխադրում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի ծովային, գետային նավը, օդանավը, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող վայրերի միջև,

ը) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է.

i) Հայաստանի դեպքում՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարը և պետական եկամուտների նախարարը կամ նրանց լիազորած ներկայացուցիչը,

ii) Բելգիայի դեպքում՝ ֆինանսների նախարարը կամ նրա լիազորած ներկայացուցիչը,

թ) «ազգային անձ» տերմինը նշանակում է.

i) Պայմանավորվող Պետության քաղաքացիությունն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

ii) ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն կամ ասոցիացիա, որը Պայմանավորվող Պետության գործող օրենսդրության հիման վրա ստացել է իր այդպիսի կարգավիճակը:

2. Պայմանավորվող Պետության կողմից Կոնվենցիան ցանկացած պահի կիրառելիս դրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե ենթատեքստը այլ բան չի պահանջում, կունենա այն նշանակությունը, որը նրան տրված է այդ պահին այդ Պետության օրենսդրությամբ այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան: Այդ

Պետության գործող համապատասխան հարկային օրենսդրությամբ սահմանված որևէ տերմինի նշանակությունը գերակայում է այդ Պետության այլ օրենքներով այդ տերմինի համար սահմանված նշանակության նկատմամբ:

Հոդված 4

Ռեզիդենտ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «Պայմանավորվող Պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է՝ ցանկացած անձ, որը, այդ Պետության օրենսդրության համաձայն, ենթակա է հարկման այնտեղ իր մշտական բնակության, պաշտոնական բնակության, ղեկավարման վայրի կամ որևէ այլ համանման չափանիշի հիման վրա, ներառում է նաև այդ Պետությունը և նրա ցանկացած քաղաքական կամ վարչատարածքային ստորաբաժանումը կամ տեղական ինքնակառավարման մարմինը: Սակայն այդ տերմինը չի ներառում որևէ անձի, որը ենթակա է հարկման այդ Պետությունում միայն այդ Պետության աղբյուրներից ստացած եկամտի կամ այնտեղ գտնվող գույքի նկատմամբ:

2. Երբ 1-ին կետի դրույթների հիման վրա ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող Պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը կորոշվի հետևյալ կերպ.

ա) նա կհամարվի միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ նա ունի իր տրամադրության տակ մշտական կացարան: Եթե նա երկու Պետություններում էլ ունի իր տրամադրության տակ մշտական կացարան, նա կհամարվի այն Պետության ռեզիդենտը, որի հետ նրա անձնական և տնտեսական կապերը առավել սերտ են (կենսական շահերի կենտրոն),

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ նա ունի իր կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Պետություններից և ոչ մեկում չունի իր տրամադրության տակ մշտական կացարան, նա կհամարվի միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ նա սովորաբար բնակվում է,

գ) եթե նա սովորաբար բնակվում է երկու Պետություններում, կամ նրանցից և ոչ մեկում, նա կհամարվի միայն այն Պետության ռեզիդենտը, որի ազգային անձն է հանդիսանում,

դ) եթե նա երկու Պետությունների ազգային անձն է հանդիսանում, կամ և ոչ մեկինը չէ, Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները հարցը կլուծեն փոխադարձ համաձայնությամբ:

3. Երբ 1-ին կետի դրույթներին համաձայն ֆիզիկական անձից տարբերվող անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող Պետությունների ռեզիդենտ, նա կհամարվի այն Պետության ռեզիդենտը, որտեղ գտնվում է իր գործնական ղեկավարման վայրը:

Հոդված 5

Մշտական հաստատություն

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է՝ գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» տերմինը, հատկապես, ներառում է.

ա) ղեկավարման վայր,

բ) մասնաճյուղ,

գ) գրասենյակ,

դ) գործարան,

ե) արտադրամաս,

զ) հանքահոր, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական պաշարների արդյունահանման ցանկացած այլ վայր:

3. Շինարարական հրապարակը, կառուցման կամ տեղակայման ծրագիրը կազմում են մշտական հաստատություն միայն այն դեպքում, երբ դրանց տևողությունը գերազանցում է ինն ամիսը:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ կետերի դրույթներին՝ «մշտական հաստատություն» տերմինը չի համարվի ներառող.

ա) հարմարությունների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահպանման կամ ցուցադրման նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը՝ բացառապես պահպանման կամ ցուցադրման նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը՝ բացառապես այլ ձեռնարկության կողմից մշակման նպատակով,

դ) գործունեության կայուն վայրի պահումը ձեռնարկության համար՝ բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

ե) գործունեության կայուն վայրի պահումը՝ ձեռնարկության համար՝ բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի որևէ այլ գործունեություն իրականացնելու նպատակով,

զ) գործունեության կայուն վայրի պահումը՝ բացառապես «ա» -«ե» ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար՝ պայմանով, որ այդ համակցության արդյունքում գործունեության կայուն վայրի համընդհանուր գործունեությունը լինի նախապատրաստական կամ օժանդակ բնույթի:

5. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին, որոնց համաձայն որևէ անձ, բացի անկախ կարգավիճակ ունեցող գործակալից, որին վերաբերում է 6-րդ կետը, գործում է Պայմանավորվող Պետությունում մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության անունից, տվյալ ձեռնարկությունը կհամարվի որպես առաջինը նշված Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատություն ունեցող ձեռնարկություն՝ ցանկացած գործունեության դեպքում, որ տվյալ անձը կիրականացնի տվյալ ձեռնարկության համար, եթե այդ անձը.

ա) ունի և սովորաբար օգտագործում է այդ Պետությունում այդ ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն, բացառությամբ եթե այդ անձի գործունեությունը չի սահմանափակվում 4-րդ կետում նշվածով, որը եթե անգամ իրականացվում է գործունեության կայուն վայրի միջոցով, այդ կետի դրույթների համաձայն՝ այդ գործունեության կայուն վայրը չի վերածում մշտական հաստատության կամ

բ) չունի այդպիսի իրավասություն, սակայն սովորաբար առաջինը հիշատակված Պետությունում օգտագործում է ապրանքների կամ արտադրանքի պահեստ, որտեղից ձեռնարկության անունից պարբերաբար առաքում է ապրանքներ կամ արտադրանք:

6. Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը չի համարվում մշտական հաստատություն ունեցող մյուս Պայմանավորվող Պետությունում միայն այն պատճառով, որ այդ մյուս Պետությունում ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում բրոքերի, սովորական կոմիսիոն գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդպիսի անձինք գործում են իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում:

7. Այն փաստը, որ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությանը, վերահսկվում է նրա կողմից կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպ), ինքնին չի դարձնում այդ ընկերություններից յուրաքանչյուրը մյուս ընկերության մշտական հաստատությունը:

Գ լուխ 3

Եկամուտների հարկում

Հոդված 6

Եկամուտ անշարժ գույքից

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքից ստացած

եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինը ունի այն նշանակությունը, որը նրան տրված է այն Պայմանավորվող Պետության օրենսդրությամբ, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Այդ տերմինը, ամեն դեպքում, ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասունն ու սարքավորումները, իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, անշարժ գույքի օգտագործման իրավունքը և օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի և այլ բնական պաշարների մշակման կամ մշակման իրավունքի համար փոխհատուցման կարգով փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները: Ծովային, գետային նավերը, օդանավերը, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցները որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տրամադրելուց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ և անկախ անձնական ծառայություններ մատուցելու համար օգտագործված անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:

Հոդված 7

Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից

1. Պայմանավորվող Պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե այդ ձեռնարկությունը մյուս Պայմանավորվող Պետությունում չի իրականացնում ձեռնարկատիրական գործունեություն այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն վերը նշված ձևով, ապա ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ մշտական հաստատությանը:

2. Հաշվի առնելով 3-րդ կետի դրույթները, երբ Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, ապա յուրաքանչյուր Պայմանավորվող Պետությունում այդ մշտական հաստատությանը վերագրվում է այն շահույթը, որն այն կարող էր ունենալ՝ նույն կամ համանման պայմաններում իրականացնելով նույն կամ համանման գործունեություն՝ լինելով ինքնուրույն և առանձին ձեռնարկություն և գործելով միանգամայն անկախ:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է նվազեցում համարել մշտական հաստատության նպատակների համար կրած ծախսերը՝ ներառյալ այդպիսով կրած կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, ինչպես այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, այնպես էլ այլուր:

Սակայն չի թույլատրվի նվազեցնել այն գումարները, եթե այդպիսիք կան, որոնք մշտական հաստատության կողմից վճարված են (այլ կերպ, քան որպես փաստացի կատարված ծախսերի փոխհատուցում) ձեռնարկության գլխավոր գրասենյակին կամ նրա գրասենյակներից որևէ մեկին պատենտներից կամ այլ իրավունքներից օգտվելու համար ռոյալթիի, հոնորարների կամ համանման վճարումների տեսքով, մատուցած որոշակի ծառայությունների կամ ղեկավարման համար միջնորդավճարի տեսքով կամ, բացառությամբ բանկային ձեռնարկության դեպքի, մշտական հաստատությանը տրամադրված փոխառության դիմաց տոկոսների տեսքով: Նմանապես, մշտական հաստատության շահույթը որոշելիս հաշվի չեն առնվի այն գումարները (այլ կերպ, քան որպես փաստացի կատարված ծախսերի փոխհատուցում), որոնք մշտական հաստատության կողմից վճարվում են ձեռնարկության գլխավոր գրասենյակին կամ նրա այլ գրասենյակներից որևէ մեկին պատենտներից կամ այլ իրավունքներից օգտվելու համար ռոյալթիի, հոնորարների կամ համանման վճարումների տեսքով, մատուցած որոշակի ծառայությունների կամ ղեկավարման համար միջնորդավճարի տեսքով կամ, բացառությամբ բանկային ձեռնարկության դեպքի, ձեռնարկության գլխավոր գրասենյակին կամ նրա այլ գրասենյակներից որևէ մեկին տրամադրված փոխառության դիմաց տոկոսների տեսքով:

4. Եթե Պայմանավորվող Պետությունում ընդունված է մշտական հաստատությանը վերագրվող շահույթը որոշել ձեռնարկության ամբողջ շահույթը իր տարբեր ստորաբաժանումների միջև համամասնական բաշխման հիման վրա, 2-րդ կետի ոչ մի դրույթ որևէ կերպ չի արգելի այդ Պայմանավորվող Պետությանը որոշել հարկման ենթակա շահույթը ընդունված բաշխման եղանակի հիման վրա: Այնուամենայնիվ, ընդունված բաշխման եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածում ընդգրկված սկզբունքներին:

5. Ոչ մի շահույթ չի վերագրվի մշտական հաստատությանը այդ մշտական հաստատության կողմից իր ձեռնարկության համար բացառապես ապրանքներ կամ արտադրանք գնելու պատճառով:

6. Նախորդ կետերի նպատակներով մշտական հաստատությանը վերագրվող շահույթը ամեն տարի որոշվում է միևնույն եղանակով, եթե չկա այն փոխելու համար պատշաճ և բավարար պատճառ:

7. Երբ շահույթը ներառում է եկամտի այնպիսի տարրեր, որոնց մասին առանձին նշվում է սույն Կոնվենցիայի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

Հոդված 8

Միջազգային փոխադրում

1. Միջազգային փոխադրումներում ծովային, գետային նավերի, օդանավերի, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործումից Պայմանավորվող Պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

2. Սույն հոդվածի նպատակներով միջազգային փոխադրումներում ծովային, գետային նավերի, օդանավերի, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործումից առաջացած շահույթը ներառում է, մասնավորապես.

ա) միջազգային փոխադրումներում օգտագործվող ծովային, գետային նավերի, օդանավերի, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցների ամբողջ բազայի վրա վարձակալությունից ստացված շահույթը և դատարկ բազայի վրա ծովային, գետային նավերի, օդանավերի, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցների ոչ կանոնավոր վարձակալությունից ստացված շահույթը,

բ) կոնտեյներների օգտագործումից կամ վարձակալության տրամադրելուց ստացված շահույթը՝ պայմանով, որ այդպիսի շահույթը լրացուցիչ կամ ոչ կանոնավոր է այն շահույթին, որին վերաբերում են 1-ին կետի դրույթները:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են նաև միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ միջազգային շահագործող գործակալությունում մասնակցությունից առաջացած շահույթի նկատմամբ:

Հոդված 9

Զուգորդված ձեռնարկություններ

1. Երբ.

ա) Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը ուղղակիորեն կամ անուղղակի մասնակցում է մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության ղեկավարմանը, վերահսկմանը, գույքի մեջ կամ

բ) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակի մասնակցում են Պայմանավորվող Պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության ղեկավարմանը, վերահսկմանը կամ գույքի մեջ,

և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրական կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կստեղծվեին երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը կհաշվեգրվեր նրանցից մեկին, բայց այդ

պայմանների պատճառով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և համապատասխանաբար հարկվել:

2. Երբ Պայմանավորվող Պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթի մեջ ներառում է և համապատասխանաբար հարկում է շահույթը, որի առնչությամբ մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս Պետությունում, և այդ ձևով ներառված շահույթն այն շահույթն է, որը հաշվեգրված կլիներ առաջինը հիշատակված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև լինեին անկախ ձեռնարկությունները բնորոշող փոխհարաբերություններ, ապա այդ մյուս Պետությունը կատարում է այդ շահույթի առնչությամբ այնտեղ գանձված հարկի գումարի այնպիսի ճշգրտում, որը կհամարի նպատակահարմար: Այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի են առնվում սույն Կոնվենցիայի այլ դրույթները, և Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները խորհրդակցում են միմյանց հետ անհրաժեշտության դեպքում:

Հոդված 10

Շահաբաժիններ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժինները վճարող ընկերությունը՝ այդ Պետության օրենքներին համաձայն. բայց եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը հանդիսանում է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ապա այդպիսով գանձվող հարկը չպետք է գերազանցի.

ա) շահաբաժինների համախառն գումարի 5 տոկոսը, եթե փաստացի սեփականատերն է հանդիսանում ընկերությունը, որը ուղղակիորեն տնօրինում է շահաբաժիններ վճարող ընկերության հիմնադիր կապիտալի առնվազն 10 տոկոսը,

բ) շահաբաժինների համախառն գումարի 15 տոկոսը՝ բոլոր մնացած դեպքերում:

Այս կետը չի ազդում ընկերության հարկմանը այն շահույթի նկատմամբ, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է՝ եկամուտ ցանկացած բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ բաժնետիրական իրավունքներից, որը ենթակա է նույնպիսի հարկային կարգավորման, ինչպես որ բաժնետոմսերից

առաջացած եկամուտը այն Պետության օրենսդրությամբ, որի ռեզիդենտն է հանդիսանում բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող կայուն բազայի միջոցով, և մասնակցությունը, որի առնչությամբ վճարվում են շահաբաժինները, գործնականորեն կապված է այդպիսի մշտական հաստատության կամ կայուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են սույն Կոնվենցիայի 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) կամ 14 – րդհոդվածի (Անկախ անձնական ծառայություններ) դրույթները:

5. Երբ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող Պետությունից, այդ մյուս Պետությունը չի կարող սահմանել որևէ հարկ ընկերության կողմից վճարված շահաբաժինների նկատմամբ, բացառությամբ երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, գործնականորեն կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության կամ կայուն բազայի հետ և չի կարող ենթարկել հարկման ընկերության չբաշխված շահույթը համապատասխան հարկատեսակով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթը ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

Հոդված 11

Տոկոսներ

1.Պայմանավորվող Պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարված տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջանում են՝ այդ Պետության օրենքներին համաձայն, բայց եթե տոկոսների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10 տոկոսը:

3. Չնայած 2-րդ կետի դրույթներին՝ տոկոսները ազատվում են հարկումից այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջացել են, եթե դրանք՝

ա) մի ձեռնարկության կողմից մյուս ձեռնարկությանը որևէ արդյունաբերական, առևտրային կամ գիտական սարքավորումների կամ հիմնական ապրանքի ապառիկ վաճառքի հետ կապված տոկոսներ են,

բ) բանկային ձեռնարկության կողմից տրամադրված, վարկառուի կողմից չներկայացված ցանկացած բնույթի փոխառության տոկոսներ են,

գ) մյուս Պայմանավորվող Պետությանը, նրա քաղաքական, վարչատարածքային ստորաբաժանումներին կամ տեղական իշխանություններին վճարված տոկոսներ են:

4. «Տոկոսներ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջներից՝ անկախ հիպոտեքային ապահովումից և անկախ պարտապանի շահույթին մասնակցության իրավունքի առկայությունից, մասնավորապես, եկամուտ կառավարական արժեթղթերից և եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից՝ ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի կամ փոխառության տոմսերի հետ կապված պարգևավճարները կամ մրցանակները: Ժամկետանց վճարման համար գանձվող տուգանքները սույն Կոնվենցիայի նպատակով տոկոսներ չեն համարվում:

5. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում՝ այնտեղ գտնվող կայուն բազայի միջոցով, և պարտապահանջը, որի առնչությամբ վճարվում են տոկոսները, գործնականորեն կապված է այդպիսի մշտական հաստատության կամ կայուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) կամ 14-րդ հոդվածի (Անկախ անձնական ծառայություններ) դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող Պետությունում, եթե վճարողն ինքը այդ Պետությունն է, այդ Պետության քաղաքական կամ վարչատարածքային ստորաբաժանումը, տեղական իշխանությունը կամ ռեզիդենտը: Սակայն երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, ունի Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատություն կամ կայուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդպիսի տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ կայուն բազան,

ապա այդ տոկոսները համարվում են առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ կայուն բազան:

7. Երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջին վերաբերող վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջացել են տոկոսները՝ այդ Պետության օրենքների համաձայն:

Հոդված 12

Ռոյալթի

1.Պայմանավորվող Պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարված ռոյալթին կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի ռոյալթին կարող է հարկվել նաև այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ այն առաջանում է՝ այդ Պետության օրենքներին համաձայն, սակայն եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը հանդիսանում է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթիի համախառն գումարի 8 տոկոսը:

3. «Ռոյալթի» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է՝ ցանկացած տեսակի վճարում, որը ստացվում է որպես փոխհատուցում՝ գրական, արվեստաբանական կամ գիտական աշխատանքի՝ ներառյալ կինոնկարների (ռադիոյով կամ հեռուստատեսությամբ հեռարձակման համար օգտագործվող ձայներիզների կամ ֆիլմերի), ցանկացած պատենտի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար, արդյունաբերական, առևտրական կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության համար:

4. 1-ին և 2-րդ կետի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում՝ այնտեղ գտնվող կայուն բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց առնչությամբ վճարվում է ռոյալթին, գործնականորեն կապված են այդպիսի մշտական

հաստատության կամ կայուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) կամ 14-րդ հոդվածի (Անկախ անձնական ծառայություններ) դրույթները:

5. Ռոյալթին համարվում է առաջացած Պայմանավորվող Պետությունում, եթե վճարողը ինքը այդ Պետությունն է, այդ Պետության քաղաքական կամ վարչատարածքային ստորաբաժանումը, տեղական իշխանությունը կամ ռեզիդենտը: Սակայն երբ ռոյալթին վճարող անձը, անկախ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, ունի Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատություն կամ կայուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորությունը, և այդպիսի ռոյալթիի վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ կայուն բազան, ապա այդպիսի ռոյալթին համարվում է առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ կայուն բազան:

6. Երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ռոյալթիի գումարը գերազանցում է այն գումարին, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջացել է ռոյալթին՝ այդ Պետության օրենքներին համաձայն:

Հոդված 13

Գույքի արժեքի հավելաճ

1. 6-րդ հոդվածում (Եկամուտ անշարժ գույքից) նշված և մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ստացված արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող Պետությունում Պայմանավորվող Պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի կամ մյուս Պայմանավորվող Պետությունում անկախ անձնական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող Պետության ռեզիդենտի ունեցած կայուն բազային վերաբերող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը՝ ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ այդպիսի կայուն

բազայի օտարումից առաջացած այդպիսի արժեքի հավելաճը, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից միջազգային փոխադրումներում ծովային, գետային նավերի, օդանավերի, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործումից, ինչպես նաև այդպիսի ծովային, գետային նավերին, օդանավերին, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցներին վերաբերող շարժական գույքի օտարումից ստացված արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

4. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից այլ ընկերության բաժնետոմսերի կամ այլ կորպորատիվ իրավունքների օտարումից ստացված գույքի արժեքի հավելաճը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե այդ ընկերության ակտիվները հիմնականում կազմված են այդ մյուս Պետությունում գտնվող անշարժ գույքից:

5. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում հիշատակված գույքից տարբերվող ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է օտարող անձը:

Հոդված 14

Անկախ անձնական ծառայություններ

1. Մասնագիտական ծառայությունների կամ այլ անկախ բնույթի գործունեությունից Պայմանավորվող Պետության ռեզիդենտի ստացած եկամուտը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե նա մյուս Պայմանավորվող Պետությունում չունի իր կանոնավոր տրամադրության տակ կայուն բազա իր գործունեությունն իրականացնելու համար: Եթե նա ունի այդպիսի կայուն բազա, այդ եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող Պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ կայուն բազային:

2. «Մասնագիտական ծառայություններ» տերմինը ներառում է, հատկապես, անկախ գիտական, գրական, արվեստաբանական, կրթական կամ ուսուցչական գործունեություն, ինչպես նաև բժիշկների, իրավաբանների, ճարտարագետների, ճարտարապետների, ատամնաբույժների և հաշվապահների անկախ գործունեություն:

Հոդված 15

Կախյալ անձնական ծառայություններ

1. Հաշվի առնելով 16-րդ (Տնօրենների հոնորարներ և ղեկավար պաշտոնյաների վարձատրություն), 18-րդ (Կենսաթոշակներ), 19-րդ (Պետական ծառայություններ) և 20-րդ (Պրոֆեսորներ և ուսանողներ) հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը, ռոճիկը և այլ համանման վարձատրությունը ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե միայն այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող Պետությունում:

2. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող Պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը հիշատակված Պետությունում, եթե.

ա) ստացողը գտնվում է մյուս Պետությունում դիտարկվող ֆինանսական տարում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա՝ ժամկետում ընդհանուր առմամբ 183 օր չգերազանցող ժամկետը կամ ժամկետները, և

բ) վարձատրությունը վճարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության ծախսերը չի կրում գործատուի մյուս Պետությունում ունեցած մշտական հաստատությունը կամ կայուն բազան:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային, գետային նավերի, օդանավերի, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցների վրա իրականացվող վարձու աշխատանքի դիմաց Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից ստացված վարձատրությունը կարող է հարկվել այդ Պետությունում:

Հոդված 16

Տնօրենների հոնորարներ և ղեկավար պաշտոնյաների վարձատրություններ

1. Որպես մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի կամ այլ համանման մարմնի անդամ՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ստացված տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

Նախորդ դրույթները կարող են կիրառվել նաև այնպիսի գործունեության համար ստացված վճարումների նկատմամբ, որը այն

Պայմանավորվող Պետության օրենքներով, որի ռեզիդենտն է հանդիսանում ընկերությունը, դիտարկվում է որպես համանման վերը նշված դրույթներով սահմանված անձի կողմից իրականացվող գործունեությանը:

2. 1-ին կետում նշված անձի կողմից ղեկավարչական կամ տեխնիկական բնույթի ամենօրյա գործունեության համար ընկերությունից ստացված վարձատրությունը, ինչպես նաև Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից այլ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության (բացառությամբ բաժնետիրական ընկերության) որպես գործընկեր անձնական գործունեության դիմաց ստացված վարձատրությունը կարող են հարկվել 15-րդ հոդվածի դրույթներին համապատասխան. այնպես, ինչպես որ վարձու աշխատանքի դիմաց վարձու աշխատանք իրականացնող անձի կողմից ստացված վարձատրությունը՝ պայմանով, որ գործատու տերմին հասկացությունը կիրառելի լինի այդ ընկերության նկատմամբ:

Հոդված 17

Արտիստներ և մարզիկներ

1. Չնայած 14-րդ (Անկախ անձնական ծառայություններ) և 15-րդ (Կախյալ անձնական ծառայություններ) հոդվածների դրույթներին՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի մյուս Պայմանավորվող Պետությունում իրականացրած արվեստի գործչի կամ մարզիկի անձնական գործունեությունից ստացած եկամուտը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են թատրոնը, կինոն, ռադիոն, հեռուստատեսությունը կամ երաժշտությունը, կամ սպորտը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Երբ արվեստի գործչի կամ մարզիկի՝ իր որպես այդպիսին իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անձամբ արվեստի գործչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, չնայած սույն Կոնվենցիայի 7-րդ (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից), 14-րդ (Անկախ անձնական ծառայություններ) և 15-րդ (Կախյալ անձնական ծառայություններ) հոդվածների դրույթներին, կարող է հարկվել այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործչի կամ մարզիկի գործունեությունը:

3. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ 1-ին կետում նշված գործունեության արդյունքում արվեստի գործչի կամ մարզիկի կողմից ստացված եկամուտը ազատվում է հարկից այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ այդ գործունեությունն իրականացվում է, եթե այդպիսի գործունեությունը իրականացվում է Պայմանավորվող Պետությունների Կառավարությունների միջև համաձայնեցված

մշակութային կամ սպորտային փոխանակման շրջանակներում և այդպիսի գործունեությունը չի իրականացվում շահույթ ստանալու նպատակով:

Հոդված 18

Կենսաթոշակներ

1. Հաշվի առնելով 19-րդ հոդվածի (Պետական ծառայություններ) 2-րդ կետի դրույթները՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտին նախկին վարձու աշխատանքի առնչությամբ վճարված կենսաթոշակները և այլ համանման վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. Սակայն Պայմանավորվող Պետության սոցիալական ապահովության օրենսդրության շրջանակներում վճարվող կենսաթոշակները և այլ պարբերական կամ ոչ պարբերական նպաստները կարող են հարկվել այդ Պետությունում: Սույն դրույթը կիրառվում է նաև այդ օրենսդրության արտոնությունների ապահովման համար Պայմանավորվող Պետության կողմից ստեղծված հասարակական սխեմաների շրջանակներում վճարված կենսաթոշակների և նպաստների նկատմամբ:

Հոդված 19

Պետական ծառայություններ

1. ա) Պայմանավորվող Պետության կամ նրա քաղաքական կամ վարչատարածքային ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից ֆիզիկական անձին այդ Պետությանը կամ ստորաբաժանմանը կամ իշխանության մարմնին մատուցած ծառայությունների դիմաց վճարված ռոճիկը, աշխատավարձը և կենսաթոշակից տարբերվող այլ համանման վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի ռոճիկը, աշխատավարձը և այլ համանման վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ մյուս Պետությունում և այդ Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը.

i) հանդիսանում է այդ Պետության ազգային անձը կամ

ii) չի դարձել այդ Պետության ռեզիդենտը միայն այդպիսի ծառայություններ մատուցելու նպատակով:

2. ա) Պայմանավորվող Պետության, նրա քաղաքական, վարչատարածքային ստորաբաժանման. տեղական իշխանության կամ

նրանց կողմից ստեղծված հիմնադրամներից ֆիզիկական անձին այդ Պետությանը, ստորաբաժանմանը կամ իշխանության մարմնին մատուցած ծառայությունների դիմաց վճարված կենսաթոշակը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի կենսաթոշակը ենթակա է հարկման միայն մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պետության ռեզիդենտն ու ազգային անձը:

3. 15-րդ (Կախյալ անձնական ծառայություններ), 16-րդ (Տնօրենների հոնորարներ և ղեկավարող պաշտոնյաների վարձատրություններ), 17-րդ (Արտիստներ և մարզիկներ) և 18-րդ (Կենսաթոշակներ) հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող Պետության կամ նրա քաղաքական կամ վարչատարածքային ստորաբաժանման կամ տեղական իշխանության մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց ստացված ռոճիկի, աշխատավարձի և այլ համանման վարձատրությունների և կենսաթոշակների նկատմամբ:

Հոդված 20

Պրոֆեսորներ և ուսանողներ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող և ուսուցանելու կամ գիտական հետազոտություն իրականացնելու նպատակով մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող պրոֆեսորներին և այլ ուսուցիչներին վճարվող ցանկացած վարձատրություն ազատվում է հարկերից այդ մյուս Պետությունում, եթե այդ անձանց գտնվելու ժամկետը այդ մյուս Պետությունում չի գերազանցում 2 տարվա ժամկետը՝ համալսարան ժամանելու օրվանից սկսած:

2. ՈՒսանողը կամ ստաժորը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Պայմանավորվող Պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ և գտնվում է առաջինը հիշատակված Պետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, չի հարկվում այդ Պետությունում իր ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար ստացած վճարումների նկատմամբ՝ պայմանով, որ այդպիսի վճարումները առաջանում են այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

3. Ուսանողին, աշակերտին կամ ստաժորին, կախված հանգամանքներից, մյուս Պայմանավորվող Պետությունում մատուցված ծառայությունների դիմաց վճարվող վարձատրությունները չեն հարկվում այդ Պետությունում 5 տարվա ժամկետի ընթացքում՝ պայմանով, որ այդ ծառայությունների մատուցումը կապված է նրանց ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու հետ:

Հոդված 21

Այլ եկամուտ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի՝ սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում չքննարկված եկամտի տարրերը, անկախ առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի (Եկամուտներ անշարժ գույքից) 2-րդ կետում սահմանված անշարժ գույքի եկամտից տարբերվող այլ եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, հանդիսանալով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող կայուն բազայի միջոցով, և գույքը կամ իրավունքը, որի առնչությամբ վճարվել է եկամուտը, գործնականորեն կապված են այդպիսի մշտական հաստատության կամ կայուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) կամ 14-րդ հոդվածի (Անկախ անձնական ծառայություններ) դրույթները:

3. Անկախ 1-ին և 2-րդ կետերի դրույթներից, Պայմանավորվող Պետության ռեզիդենտի՝ սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում չհիշատակված և մյուս Պայմանավորվող Պետությունում առաջացած եկամտի տարրերը նույնպես կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

Հոդված 22

Գույք

1. 6-րդ հոդվածում (Եկամուտներ անշարժ գույքից) նշված և անշարժ գույքի տեսքով ներկայացված՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտին պատկանող և մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող Պետությունում Պայմանավորվող Պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի կամ մյուս Պայ-մանավորվող Պետությունում անկախ անձնական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կայուն բազային վերաբերող շարժական գույքի տեսքով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից շահագործվող ծովային, գետային նավերով, օդանավերով կամ երկաթուղային փոխադրամիջոցներով ներկայացված գույքը և այդպիսի ծովային, գետային նավերի, օդանավերի, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող շարժական գույքը ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

4. Ընկերության բաժնետոմսերով և այլ կորպորատիվ իրավունքներով ներկայացված գույքը, որի ակտիվները գլխավորապես կազմված են Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքից, կարող է հարկվել այդ Պետությունում:

5. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի գույքի բոլոր այլ տարրերը ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

Գլուխ 4

Կրկնակի հարկման բացառման մեթոդներ

Հոդված 23

Կրկնակի հարկման բացառումը

1. Հայաստանում կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպ.

ա) Երբ Հայաստանի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որոնք սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կարող են հարկվել Բելգիայում, ապա Հայաստանը թույլատրում է.

i) այդ ռեզիդենտի եկամտի հարկի նվազեցում՝ Բելգիայում վճարված եկամտի հարկին հավասար գումարի չափով,

ii) այդ ռեզիդենտի գույքի հարկի նվազեցում՝ Բելգիայում վճարված գույքի հարկին հավասար գումարի չափով:

Սակայն երկու դեպքում էլ այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի մինչև նվազեցման իրականացումը հաշվարկված եկամտի հարկի կամ գույքահարկի այն մասը, որը, հանգամանքներից կախված, վերագրվում է այն եկամտին կամ գույքին, որոնք կարող են հարկվել Բելգիայում:

բ) Երբ սույն Կոնվենցիայի ցանկացած դրույթին համապատասխան Հայաստանի ռեզիդենտի ստացած եկամուտը կամ տնօրինած գույքը ազատված են հարկումից Հայաստանում, Հայաստանը, այնուամենայնիվ, կարող է այդպիսի ռեզիդենտի գույքի կամ եկամտի մնացած մասի համար հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել հարկից ազատված եկամուտը կամ գույքը:

2. Բելգիայում կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպ.

ա) Երբ Բելգիայի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույքի տարրեր է տնօրինում, որոնք, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, հարկվում են Հայաստանում, որոնք տարբերվում են 10-րդ հոդվածի (Շահաբաժիններ) 2-րդ կետից, 11-րդ հոդվածի (Տոկոսներ) 2-րդ և 7-րդ կետերից և 12-րդ հոդվածի (Ռոյալթի) 2-րդ և 6-րդ կետերից, Բելգիան այդպիսի եկամուտները և գույքի այդպիսի տարրերը ազատում է հարկից, սակայն կարող է այդ ռեզիդենտի մնացած եկամտի կամ գույքի նկատմամբ հարկի գումարի հաշվարկման ժամանակ կիրառել հարկի այնպիսի դրույքաչափ, որը կիրառելի կլիներ, եթե այդպիսի եկամտի կամ գույքի տարրերը ազատված չլինեին հարկերից:

բ) Հաշվի առնելով Բելգիայի օրենսդրության այն դրույթները, որոնք վերաբերում են բելգիական հարկից արտասահմանում վճարված հարկերի նվազեցմանը, երբ Բելգիայի ռեզիդենտը բելգիական հարկի նպատակներով համընդհանուր եկամտի առանձին եկամտի տարրեր է ստանում, որոնք հանդիսանում են շահաբաժիններ (որոնք չեն ազատվում Բելգիական հարկից ներքոհիշյալ «գ» ենթակետի համաձայն), տոկոսներ կամ ռոյալթի, ապա այդ եկամտի նկատմամբ կիրառվող Հայկական հարկը հաշվանցվում է բելգիական հարկից այդպիսի եկամտի առնչությամբ:

գ) Բելգիայի ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից Հայաստանի ռեզիդենտ հանդիսացող ընկերությունից ստացված շահաբաժինները ազատվում են Բելգիայում շահութահարկից՝ Բելգիայի օրենքով սահմանված պայմաններով և սահմանափակումներով:

դ) Երբ Բելգիայի օրենքի համաձայն Բելգիայի ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկության Հայաստանում գտնվող մշտական հաստատության կրած վնասները Բելգիայում հարկելու համար փաստացի կերպով կնվազեցվեն այդ ձեռնարկության շահույթից, «ա» ենթակետով նախատեսված ազատումը այդ մշտական հաստատությանը վերագրվելիք շահույթի նկատմամբ չի կիրառվի Բելգիայում այլ հարկային ժամանակա-հատվածների համար այնքանով, որքանով այդ շահույթը նույնպես ազատված կլինի հարկումից Հայաստանում՝ վերը նշված վնասների փոխհատուցման նպատակով:

Հոդված 24

Անխտրականություն

1.Պայմանավորվող Պետության ազգային անձինք չեն ենթարկվում մյուս Պայմանավորվող Պետությունում ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորության, քան միևնույն հանգամանքների դեպքում (մասնավորապես, ռեզիդենտության նկատմամբ) հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունները, որին ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պետության ազգային անձինք: Սույն դրույթը, անկախ 1-ին հոդվածի (Անձինք, որոնց նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան)

դրույթներից, կիրառվում է նաև Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող՝ քաղաքացիություն չունեցող անձինք չեն ենթարկվում Պայմանավորվող Պետություններից և ոչ մեկում այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան միևնույն հանգամանքների դեպքում, հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունները, որին ենթարկվում են կամ կարող են ենթարկվել տվյալ Պետության ազգային անձինք:

3. Մյուս Պայմանավորվող Պետությունում Պայմանավորվող Պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս Պետությունում չպետք է լինի պակաս բարենպաստ, քան այդ մյուս Պետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկության հարկումը: Այս դրույթը չպետք է մեկնաբանվի որպես պարտավորեցնող՝ Պայմանավորվող Պետությանը շնորհելու մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտներին, հարկման նպատակներով, այնպիսի անձնական արտոնություններ, նվազեցումներ և զեղչեր, որոնք այդ Պետությունը տրամադրում է սեփական ռեզիդենտներին՝ նրանց քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների պատճառով:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի (Զուգորդված ձեռնարկություններ) 1-ին կետի, 11-րդ հոդվածի (Տոկոսներ) 7-րդ կետի կամ 12-րդ հոդվածի (Ռոյալթի) 6-րդ կետի դրույթները, Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարած տոկոսները, ռոյալթին և այլ վճարումները, այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով, ենթակա են նվազեցման նույն պայմաններով, ինչպես առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին վճարելիս:

Նմանապես, Պայմանավորվող Պետության ձեռնարկության ցանկացած պարտքը մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին, այդ ձեռնարկության հարկման ենթակա կապիտալի սահմանման նպատակով, ենթակա է նվազեցման նույն պայմաններով, ինչպիսիք կլինեին, եթե պայմանագիրը կնքվեր առաջինը նշված Պետության ռեզիդենտի հետ:

5. Պայմանավորվող Պետության ձեռնարկությունները, որոնց կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ, ուղղակիորեն կամ անուղղակի պատկանում է մյուս Պայմանավորվող Պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտներին կամ վերահսկվում է նրանց կողմից, չեն ենթարկվի առաջինը հիշատակված Պետությունում այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորությունների, որին ենթարկվում են կամ կարող են ենթարկվել առաջինը հիշատակված Պետության այլ համանման ձեռնարկությունները:

6. Չնայած 2-րդ հոդվածի (Հարկեր, որոնց վրա տարածվում է Կոնվենցիան) դրույթներին, սույն հոդվածի դրույթները կիրառվում են բոլոր տեսակի և բնույթի հարկերի նկատմամբ:

Հոդված 25

Փոխհամաձայնեցման ընթացակարգ

1. Այն դեպքում, երբ անձը գտնում է, որ Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն իր՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկմանը, ապա նա կարող է, այդ Պետությունների ներքին օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, ներկայացնել իր գործն այն Պայմանավորվող Պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է հանդիսանում, կամ, եթե իր գործը վերաբերում է սույն Կոնվենցիայի 24-րդ հոդվածի (Անխտրականություն) 1-ին կետին, այն Պայմանավորվող Պետության իրավասու մարմնին, որի ազգային անձն է հանդիսանում: Այդպիսի գործը պետք է ներկայացվի երեք տարվա ընթացքում՝ սույն Կոնվենցիայի դրույթներին ոչ համապատասխան հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից:

2. Եթե իրավասու մարմինը կհամարի դիմում-բողոքը հիմնավորված և եթե, ինքը չի կարողանա հանգել գոհացուցիչ լուծման, ապա նա կձգտի լուծել հարցը մյուս Պայմանավորվող Պետության իրավասու մարմնի հետ փոխադարձ համաձայնությամբ՝ սույն Կոնվենցիային չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով: Ցանկացած ձեռքբերված համաձայնություն իրականացվում է անկախ Պայմանավորվող Պետությունների ներքին օրենսդրություններում առկա որևէ ժամանակային սահմանափակման:

3. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները կձգտեն փոխհամաձայնությամբ լուծել Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացող ցանկացած դժվարություն կամ կասկած:

4. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները համաձայնության կհասնեն Կոնվենցիայի դրույթների կատարման համար անհրաժեշտ վարչարարական միջոցառումների վերաբերյալ, մասնավորապես, յուրաքանչյուր Պայմանավորվող Պետության ռեզիդենտների կողմից մյուս Պետությունում Կոնվենցիայով նախատեսված հարկի ազատման կամ նվազեցման արտոնություններից օգտվելու հաստատումների ներկայացման վերաբերյալ:

5. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները կարող են անմիջական կապ հաստատել միմյանց հետ Կոնվենցիայի կիրառման համար:

Հոդված 26

Տեղեկությունների փոխանակում

1. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները կփոխանակեն այնպիսի տեղեկություններ, որոնք անհրաժեշտ կլինեն սույն Կոնվենցիայի կամ Կոնվենցիայում ընգրկված հարկերի վերաբերյալ Պայմանավորվող Պետությունների ներքին օրենսդրության դրույթների կիրառման համար՝ այնքանով, որքանով դրանցից առաջացող հարկումը չի հակասում սույն Կոնվենցիային: Տեղեկությունների փոխանակումը 1-ին հոդվածով (Անձինք, որոնց նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան) չի սահմանափակվում: Պայմանավորվող Պետության ստացած ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի, ինչպես այդ Պետության ներքին օրենքների սահմաններում ստացված տեղեկությունը, և հայտնվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք զբաղվում են Կոնվենցիայով ընդգրկված հարկերի գնահատմամբ կամ գանձմամբ, հարկերի առնչությամբ հարկադիր բռնագանձմամբ կամ դատական հետապնդմամբ, հարկերի վերաբերյալ բողոքարկումների քննարկմամբ: Այդպիսի անձինք կամ մարմինները օգտագործում են տեղեկությունները միմիայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել տեղեկությունները բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումների ընթացքում:

Իրավասու մարմինները խորհրդակցության միջոցով կմշակեն համապատասխան պայմաններ, մեթոդներ և ձևեր այդպիսի տեղեկության փոխանակումն ապահովելու համար՝ ներառյալ, նպատակահարմարության դեպքում, հարկումը բացառելուն վերաբերող տեղեկության փոխանակումը:

2. Առաջին կետի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող Պետությանը պարտավորեցնող.

ա) իրականացնելու այդ կամ մյուս Պայմանավորվող Պետության օրենսդրությանը կամ վարչական գործավարությանը հակասող վարչական գործավարության միջոցառումներ,

բ) ներկայացնելու տեղեկություն, որը հասանելի չէ այդ կամ մյուս Պայմանավորվող Պետության օրենսդրությամբ կամ սովորական վարչական գործավարության ընթացքում,

գ) ներկայացնելու տեղեկություն, որը բացահայտում է որևէ աշխատանքային, ձեռնարկատիրական, արդյունաբերական, առևտրային, մասնագիտական գաղտնիք, աշխատանքային գործընթաց, կամ՝

տեղեկատվություն, որի բացահայտումը հակասում է պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

Հոդված 27

Աջակցություն գանձման գործում

1. Պայմանավորվող Պետությունները օգնություն ու աջակցություն են ցուցաբերում միմյանց՝ սույն Կոնվենցիայով ներառած հարկերի, ինչպես նաև այդ հարկերին վերաբերող գերավճարների, լրացումների, տոկոսների, ծախսերի և տուգանքի բնույթ չկրող տույժերի ծանուցման և գանձման նպատակով այն դեպքերում, երբ այդպիսի հարկային հայցերը որոշված են և, աջակցության հայց ներկայացրած Պետության իրավական դրույթների և կարգերի համաձայն, այլևս ենթակա չեն գանգատարկման:

2. Հայցատեր Պետության պահանջով Հայցվող Պետությունը ձեռնարկում է Հայցատեր Պետության հարկային հայցի ծանուցումն ու գանձումը իր հարկային հայցերի ծանուցման և գանձման համար կիրառվող օրենքների և վարչարարական պրակտիկայի համապատասխան, եթե Կոնվենցիայով այլ բան նախատեսված չէ:

3. Պայմանավորվող Պետության իրավասու մարմնի կողմից այդպիսի հարկերի գանձման աջակցության հայցերը ներառում են այդ մարմնի հավաստիացումը, որ այդ Պետության օրենսդրությամբ այդ հարկերը վերջնականորեն որոշված են: Սույն հոդվածի նպատակներով հարկը համարվում է վերջնականորեն որոշված, երբ Պայմանավորվող Պետությունը իր ներքին օրենսդրությամբ իրավունք ունի գանձելու հարկը, և հարկատուն չունի հետագա իրավունք՝ խոչընդոտելու գանձմանը:

4. Հայցվող Պայմանավորվող Պետության կողմից ընդունված՝ Հայցատեր Պայմանավորվող Պետության հայցը կատարվում է առաջինը հիշատակված Պետության կողմից այնպես, ինչպես որ այդպիսի հայցը կվերաբերեր իր սեփական հարկերին: Հայցվող Պետությունը պարտավորված չէ ընդունել Հայցատեր Պետության հայցը, եթե վերջինս իր տարածքում չի ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները իր հարկային պարտքի գանձման համար:

5. Հարկային հայցի գանձման աջակցության պահանջը ուղեկցվում է.

ա) Հայցատեր Պետությունում գանձում թույլատրող փաստաթղթի պաշտոնական պատճենով,

բ) Հայցատեր Պետությունում գանձման համար պահանջվող ցանկացած այլ փաստաթղթով և

գ) նպատակահարմարության դեպքում՝ վարչական մարմնի կամ դատարանի կողմից վերջնական որոշման պաշտոնական պատճենով:

6. Հայցատեր Պետությունում գանձում թույլատրող փաստաթուղթը պետք է ունենա նույն ազդեցությունը նաև Հայցվող Պետությունում:

7. Հարկային հայցի ներկայացման ժամկետներին վերաբերող հարցերը որոշվում են բացառապես Հայցատեր Պետության օրենսդրությամբ:

8. Աջակցության հայցի նկատմամբ Հայցվող Պետության կողմից իրականացված գանձման գործողությունները, որոնք այդ Պետության ներքին օրենսդրության համաձայն, ընդհատում կամ դադարեցնում են ժամկետների սահմանափակումները, պետք է ունենան նույն արդյունքը նաև Հայցատեր Պետության ներքին օրենսդրության շրջանակներում: Հայցվող Պետությունը այդ գործողությունները կատարելու մասին կտեղեկացնի Հայցատեր Պետությանը:

9. Հարկային հայցի աջակցության պահանջը չի ունենա որևէ նախապատվություն Հայցվող Պետությունում:

10. Սույն հոդվածի ոչ մի դրույթ չի դիտարկվում որպես պարտավորեցնող յուրաքանչյուր Պայմանավորվող Պետությանը իր սեփական հարկային պարտքերի գանձման կամ պետական քաղաքականությանը (հասարակական կարգին) հակասող վարչական միջոցառումներ իրականացնելու:

11. Պայմանավորվող Պետության իրավասու մարմնի կողմից գանձված գումարները, սույն հոդվածի համաձայն, փոխանցվում են մյուս Պայմանավորվող Պետության իրավասու մարմնին: Սակայն, եթե Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները չեն համաձայնվի այլ կերպ, հարկային պարտքի գանձման կապակցությամբ կատարված սովորական ծախսերը կրում է Հայցվող Պետությունը:

12. 26-րդ հոդվածի (Տեղեկությունների փոխանակում) 1-ին կետի դրույթները վերաբերում են ցանկացած տեղեկության, որը, սույն հոդվածի համաձայն, տրամադրվում է Պայմանավորվող Պետության իրավասու մարմնին:

13. Պայմանավորվող Պետության իրավասու մարմինը կարող է այդ Պետության հարկային հայցերի վերաբերյալ, որոնք ենթակա են կամ որոնք դեռևս ենթակա են բողոքարկման, իր իրավունքների պաշտպանման համար պահանջել մյուս Պայմանավորվող Պետության իրավասու մարմնից, որ նա կիրառի այդ Պետության օրենքներով սահմանված պաշտպանական միջոցները: Վերոհիշյալ կետերի դրույթները անհրաժեշտ փոփոխություններով կկիրառվեն նաև այդ միջոցների նկատմամբ:

Հոդված 28

Դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական հիմնարկների անդամներ

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի ազդում դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական հիմնարկների անդամների միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված հարկային արտոնությունների վրա:

Հոդված 29

Ուժի մեջ մտնելը

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Պետություն կծանուցի մյուս Պայմանավորվող Պետությանը սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու համար իր օրենքի համաձայն անհրաժեշտ ընթացակարգերի ավարտի մասին: Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմտնի ծանուցումներից վերջինը ստանալու օրվան հաջորդող 30-րդ օրը:

2. Կոնվենցիայի դրույթները կիրառվում են.

ա) աղբյուրի մոտ գանձվող եկամուտների հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրացուցային տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո հարկման կամ հաշվանցման ենթակա եկամուտների նկատմամբ,

բ) աղբյուրի մոտ գանձվող այլ եկամուտների հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրացուցային տարվան հաջորդող տարվա դեկտեմբերի 31-ին կամ դեկտեմբերի 31-ից հետո ընկնող հարկման ենթակա ժամանակահատվածների նկատմամբ,

գ) գույքի հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրացուցային տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ի դրությամբ առկա գույքի տարրերի վրա գանձված հարկերի նկատմամբ:

Հոդված 30

Փոփոխություններ

Սույն Կոնվենցիային վերաբերող փոփոխություններն ու լրացումները կատարվում են Պայմանավորվող Պետությունների փոխադարձ համաձայնությամբ՝ սույն Կոնվենցիայի անբաժան մաս կազմող Արձանագրությունում: Այդ Արձանագրությունը վավերացվում է նույն ձևով, ինչպես որ սույն Կոնվենցիան:

Հոդված 31

Գործողության դադարեցում

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմնա, մինչև դադարեցվի Պայմանավորվող Պետության կողմից, սակայն Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Կոնվենցիան՝ դիվանագիտական ուղիներով դադարեցման մասին գրավոր ծանուցում ուղարկելով Կոնվենցիան ուժի մեջ մտնելու տարվանից 5 տարի հետո՝ ցանկացած օրացուցային տարվա ոչ ուշ, քան հունիսի 30-ը: Այդ դեպքում Կոնվենցիան կդադարեցնի իր գործողությունը.

ա) աղբյուրի մոտ գանձվող եկամուտների հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան դադարեցնելու մասին ծանուցում տված օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ից,

բ) աղբյուրի մոտ չգանձվող այլ եկամուտների հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան դադարեցնելու մասին ծանուցում տված օրացուցային տարվան հաջորդող տարվա մինչև դեկտեմբերի 31-ը ընկնող հարկման ենթակա ժամանակահատվածների նկատմամբ,

գ) գույքի հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիան դադարեցնելու մասին ծանուցում տված տարվա հունվարի 1-ի դրությամբ գույքի տարրերի վրա գանձված հարկերի նկատմամբ:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Բրյուսել քաղաքում, 2001 թ. հունիսի 7-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ֆրանսերեն, հոլանդերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության և Բելգիայի Թագավորության միջև Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին Կոնվենցիայի ստորագրման պահին ներքոստորագրյալները համաձայնվել են Կոնվենցիայի անբաժան մաս կազմող հետևյալ դրույթների վերաբերյալ.

1. Հոդված 4 (Ռեզիդենտ), կետ 2.

Պայմանավորվող Պետությունում ռեզիդենտի կենսական շահերի կենտրոնը որոշելու նպատակով հաշվի են առնվելու, մասնավորապես, հետևյալ չափանիշները.

- վայր, որտեղ իրականում սովորաբար բնակվում է անձի ընտանիքը,
- մասնագիտական պատճառներով բացակայելուց հետո այդ Պայմանավորվող Պետություն անձի սովորաբար վերադառնալու փաստը,
- մյուս Պայմանավորվող Պետությունում անձի լինելու տևողությունը,
- վայր, որտեղ անձը զարգացնում է իր հասարակական հարաբերությունները և իրականացնում է քաղաքական և մշակութային գործունեություն,
- անձի աշխատանքի կատարման վայրը,
- անձի բարեկեցության ապահովման վայրը:

2. Հոդված 4 (Ռեզիդենտ), կետ 3.

Ֆիզիկական անձից տարբերվող անձի փաստացի ղեկավարման վայրը նշանակում է՝ վայր, որտեղ տեղի է ունենում այդ անձի ղեկավարչական գործունեությունը, գործերի կատարումը և շահերի իրագործումը: Այդպիսի վայրի տեղակայումը որոշելու նպատակով հաշվի են առնվելու հետևյալ չափանիշները.

- փայատերերի հիմնական ժողովի կայացման վայրը,
- տնօրենների խորհորդի հանդիպման վայրը,
- այդպիսի անձի հիմնական ամենօրյա կառավարման կենտրոնի տեղակայման վայրը: Ընդ որում հաշվի են առնվելու այնպիսի պարագաներ, ինչպիսիք են՝ վարչության, առևտրային բաժնի, կենտրոնական հաշվապահության, հաշվապահական փաստաթղթերի տեղակայման վայրը:

Տարաձայնության դեպքում կգերակայի վերջին հիշատակված չափանիշը:

Պայմանավորված է, որ ֆիզիկական անձից տարբերվող անձի՝ մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձից տարբերվող անձի կողմից վերահսկման փաստը չի դարձնում առաջինը հիշատակված անձին այդ մյուս Պետության ռեզիդենտ:

3. Հոդված 10 (Շահաբաժիններ), կետ 3.

10-րդ հոդվածի (Շահաբաժիններ) 3-րդ կետում օգտագործված «շահաբաժիններ» տերմինը նշանակում է նաև Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից այդ ընկերության բաժնետոմսեր կամ շահույթի բաշխման այլ մասնակցության իրավունք ունեցող կամ այդ ընկերության տնօրենների խորհրդի անդամ հանդիսացող կամ համանման բնույթի գործունեություն իրականացնող ֆիզիկական անձին կամ այդպիսի անձի կնոջը և երեխաներին վճարված տոկոսները, երբ այդպիսի տոկոսները դիտարկվում են որպես շահաբաժիններ այդ Պայմանավորվող Պետության հարկային օրենսդրությամբ:

4. Հոդված 11 (Տոկոսներ), կետ 4.

11-րդ հոդվածի (Տոկոսներ) 4-րդ կետի նպատակներով «տոկոսներ» տերմինը չի ներառում սույն Արձանագրության 3-րդ կետով որպես շահաբաժիններ սահմանված տոկոսները:

5. Հոդված 12 (Ռոյալթի), կետ 3.

Սույն Կոնվենցիայի 12-րդ հոդվածի (Ռոյալթի) 3-րդ կետը կիրառելիս տեխնիկական ծառայության կամ տեխնիկական աջակցության դիմաց կատարված վճարումները չեն դիտարկվում որպես արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերբերող տեղեկությունների դիմաց վճարումներ և ենթակա են հարկման՝ կախված հանգամանքներից, 7-րդ հոդվածի (Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից) և 14-րդ հոդվածի (Անկախ անձնական ծառայություններ) դրույթների համապատասխան:

6. Հոդված 13 (Եկամուտ գույքի հավելաճից), կետ 4.

Պայմանավորված է, որ բաժնետոմսերի օտարումից ստացված եկամուտը ենթակա է հարկման դիտարկվող Պայմանավորվող Պետությունում միայն այնքանով, որքանով այդպիսի բաժնետոմսերի արժեքը ստացվում է անմիջապես այդ Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքից:

7. Հոդված 22 (Գույք), կետ 4.

Պայմանավորված է, որ բաժնետոմսերով կամ այլ կորպորատիվ իրավունքներով ներկայացված գույքը ենթակա է հարկման դիտարկվող Պայմանավորվող Պետությունում միայն այնքանով, որքանով այդպիսի բաժնետոմսերի կամ այլ կորպորատիվ իրավունքների արժեքը ստացվում է անմիջապես այդ Պետության մեջ գտնվող գույքից:

7. Հոդված 29 (Ուժի մեջ մտնելը).

1987 թվականի դեկտեմբերի 17-ին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Բելգիայի Թագավորության Կառավարությունների միջև կնքված Կոնվենցիայի դրույթները դադարեցնում են իրենց գործողությունը ցանկացած հայկական կամ բելգիական այն եկամուտների նկատմամբ, որոնց առնչությամբ կգործի սույն Կոնվենցիան՝ 29-րդ հոդվածի (Ուժի մեջ մտնելը) 2-րդ կետի դրույթներին համապատասխան:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Բրյուսել քաղաքում, 2001 թ. հունիսի 7-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ֆրանսերեն, հոլանդերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

Կոնվենցիան ուժի մեջ է մտել 2004 թ. հոկտեմբերի 1-ից: